

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Նիւթեր հայ մեղիփութեան մասին.
Բ. պրակ. Դօփեանք եւ Մեղիք Շահնա-
զարեանք. գրեց Կարապետ Եղիսկապոս.
Ս. Էջմիածին, 1914. հրատ. Ազգ. Ընկ.

Հայ մեղիփութեան անցեալի ուսումնասիրութեան բնագաւա-
ռում Ազգագրական Ընկերութեան ներկայ հրատարակութիւնն
առաջինն է, որ ձեռնարկում է առանց հրապարակախօսական-
վիպագրական հարցասիրութեան. Բաֆֆի և իւր հետևողների ու-
մանթիքական ըմբռնումներին և ազդայնական հրահանգներին
ենթակայ պատմական երկերի հանդէպ՝ այս աշխատութիւնը
կրում է նորութեան հմայք. նա գալիս է դիտական քննադատու-
թեան հիմունքների վրայ դնելու հայ հասարակական կեանքում
գեո ևս մի դար առաջ տիրող իշխանական-ազնուական դասի մի
կարեւոր շերտի ուսումնասիրութեան դործը: Հարկաւ, պատմագի-
տական տեսակէտից այդ շերտը հետաքրքրական է այնքան միայն,
որքան հնարաւորութիւն կունենանք ուսումնասիրութեան նիւթ
զարձնելու նրա դոյութեան հասարակական և պետական հիմունք-
ները ու մեկնելով այդ հիմունքներից՝ բնորոշել նրա դասային
մտայնութեան և քաղաքականութեան զարգացման ընթացքը:
Սակայն այդպիսի մի ուսումնասիրութիւն սկսելու համար չէ կա-
տարուել ոչինչ նախնական աշխատանք. ոչ միայն մեղիքների
տիրապետութեան շրջանի իրաւական յարաբերութիւնները բնո-
րոշող նիւթերի ժողովածուներ չը կան ուսումնասիրողի տրամա-
դրութեան տակ, այլ և նոյն իսկ՝ հայ մեղիփութիւնների քար-
տէզն ու մեղիքական տների քիչ թէ շատ վստահելի տոհմագրու-
թիւնը:

Վերջին տեսակի մի աշխատութիւն է ահա, որ, սահմանա-
փակուելով Դօփեան և Մեղիք Շահնազարեան սերունդներով, փոր-
ձում է ներկայացնել վերնադրուած ուսումնասիրութեան հեղի-
նակը: Դիմելով միջնադարեան Հայաստանի ազդեցիկ իշխանական

տներից մէկի՝ Դօփեանների սերնդաբանութեանը, հեղինակն աշխատում է ազգակցական կապեր գտնել դրանց և Գեղարքունեաց երկրում իշխող Մելիք Շահնազարեանների միջև ու ներկայացնել միաժամանակ վերջիններիս ճիշդագրութիւնը՝ հասցնելով սերունդների յաջորդականութեան շարքը մինչև ԺԸ դարը։ Դարաւոր հնութիւն ունեցող իշխանական այս ցեղերի տոհմագրութիւնը մօտաւոր ամբողջութեամբ և ճշտութեամբ տալու համար, տարաբախտաբար, դեռ աղբիւրների պակասութիւն է զգացւում. դեռ հրատարակութեան չեն տուած խնդրի լուսաբանութեանը նպաստող արձանագրութիւններից և յիշատակարաններից շատերը և որ ամենակարևորն է՝ հայ և օտար գիւաններում ու մասնաւոր անձանց մօտ պահուող պատմական և տոհմային վաւերացիւթեքը. նկատենք նաև այն, որ արդէն իսկ հրատարակած նիւթերն անգամ մասամբ ժողովել ու խմբագրել են հայ հնախօսութեամբ պարագող այնպիսի մարդիկ, որոնց գործերից օգտուելուց պահանջւում է տարակուսանքների մէջ տատանուող մտքի արտակարգ լարում։ Եւ չընայած բոլոր այս անպատեհ հանգամանքներին՝ իրեն մատչելի աղբիւրների սուղ և յաճախ հակասական տեղեկութիւնները հեղինակն աշխատել է օգտագործել գրեթէ լիովին՝ ենթարկելով դրանց կանխական ստուգութեան և քննադատութեան։ Պէտք է ցուել միայն, որ աղբիւրների վաւերականութիւնն որոշելիս, հեղինակը դանց է առնում այսպէս կոչուած «արտաքին քննադատութեան» (die äussere Kritik) պահանջները. նա հնարաւորութիւն չէ ունեցել անձամբ կարդալու կասկածելի թուացող արձանագրութիւնները կամ անմիջապէս զննելու այն թղթերը, որ չէ համարում վաւերական. նման դէպքերում նա շատանում է վկայութիւնների ներքին հնարաւորութեան սահմանների որոշումով՝ ստուգելով այդ կարգի փաստաթղթերը թեք ճանապարհներով վերականգնած ճշմարտութիւնների միջոցով։ Սիրում ենք հաւատալ, որ բանական ենթադրութիւնները շատ դէպքերում մոլորութեան մէջ չեն ձգում հեղինակին և որ մտածողութեան այդ իսկ եղանակով երբեմն նրան իրօք յաջողւում է վերստուգել իշխանների ու մելիքների անուններն ու նրանց ազգակցական յարաբերութիւնները. մնում է միայն սպասել, որ նոր ուսումնասիրութիւնները դան լրացնելու ու սրբագրելու հեղինակի տակաւին թերի գործը։

Այսակող թող ներուի մեզ այս ընդհանուր նկատողութեանը կցել մի երկու աննշան դիտողութիւն միայն։

Ամբատեանի «Գեղարքունիք»ում հրատարակուած Դաւիթ խան Շափուրեանի թղթերը, որոնց քննադատութեանը հեղինակը նուիրել է մի քանի էջ (139 և հետ.), հանուած են Եփրեմ կաթո-

դիկոսի դիւանից. Մելիք Շահնազարեանների անունով կան սա-
կայն մի շարք ուրիշ տոհմային գրութիւններ ու ֆերմաններ, որ
դեռ քննութեան չեն տոնուած. դրանց մի մասը, որքան մեղ-
յայտնի է, պահուած են Բաշ Աղջաքենդ գիւղում (Վերին շէն,
Գանձ. գաւառ) այդ տոհմի շառաւիղներից մէկի՝ Բալաս Բէկի
մօտ: Վերջինիս թղթերը, որքան եզրակացնել կարող ենք մեղ-
մօտ գտնուող մի երկու պատճէններից, ըստ բովանդակութեան
բաւականին մօտ պէտք է լինեն «Գեղարքունիքում հրատարա-
կուածներին: Մեր ձեռքի տակ եղած պատճէններից երեւում է, որ
1824 թուին Դաւիթ խանը իր ազգականներից լիազօրութիւն է
ունեցել «համեմատ պարսից սէֆէվիդ թագաւորաց հրովարտա-
կաց»՝ տիրանալու Նախիջևանայ մօտ գտնուող Զահրուդըրի
(Zahrudur) գաւառին, որպէսզի այդ հողերը «յետ տիրելէն,
երիցս բաժին արասցէ, մի բաժինն վ՛ան իւր, մի բաժինն վ՛ան
մելիք Բարսեղին, մին բաժինն վ՛ան ներկայ եղելոյս աններկա-
յից»: Թղթի տակ ստորագրել են Մելիք Բարսեղ, Օսուշան, Միանա-
սար, Թուստամ և Մովսէս Մելիք Շահնազարեան Շափուրեանները:
«Օրինական ճանապարհով հաւաքած տեղեկութիւնների հիման
վրայ» տուած Ղարաբաղի կոնսիստորիայի 1861 թուի մի վկայու-
թեան համաձայն, բոլոր այս ազնուականները պէտք է առաջա-
ցած լինեն մելիք Շահնազար Շափուրի երկու որդիներից՝ մելիք
Նաւրիից և Նաւրի Աղայից. առաջինից ծնունդ է Միւր Դաւիթ
խանի հայր մելիք Ասատուածատուրը, իսկ երկրորդից՝ Միանասար
բէկի հայր Նաղդին. «օրինական ճանապարհով հաւաքած տեղե-
կութիւններն» աղբիւրն այստեղ, ըստ երևոյթին, պատմական
թոյլ ու շփոթ յիշողութիւններից հետուն չի անցնում: Տպագիր
աղբիւրների շարքում հեղինակն ի նկատի չէ առել Նփրեմ կա-
թողիկոսի մի կոնգակը, որով «վերահասու դալով մեր խկութեան
ի պատմագրութենէ հայոց և ի զանազան հրովարտակացն նախ-
նեաց» վաւերացրում է «քեօլանու և դարիդիպիլու ի դրոց ծարու
անուանեալ» գաւառում իշխող մելիքների ազգաբանական աղի-
սակը: (Տես «Լեւոմայ», 1900. Ա. դիրք, էջ 290 և հետ.): Կոնգա-
կում յիշուած անունները—մելիք Ուսուփն և որդի նորա մելիք
Պալասան, և որդի նորա Մէլիք Բէկ, և որդի նորա Միրզախան
և որդի նորա մելիք Ալլահվերդի և որդի նորա մելիք Ալլահդուլի
և որդի նորա Ալամ խան և որդի նորա դարձեալ մելիք Ալլահ-
վերդի և որդի նորա մելիք Սարգիսջան» և այլն—մասամբ նոր
են, իսկ մասամբ չեն համապատասխանում հեղինակին ծանօթ
աղբիւրների տուեալներին:

էջ 147 ու 161 և հետ. բերուած Դօփեան Պետրոս վարդա-
պետի և նրա եղբայրների անունները յիշատակող աղբիւրների

Թուով հեղինակի ուշադրութիւնից վերադառնալ է հիշմարտնի № 2105 Տաթևացու գրչագիրը քարոզչութի յիշատակարանը: Քարոզչիւրը գրուել է Շաք գաւառում Վասիլանէ կոյսի ձեռքով, «ի վանս կուսանաց, ընդ հովանեաւ Թադէի առաքելոյն»։ յիշատակարանի մէջ կարդում ենք. «Որ և տինչամբ սրտի և ըղձափափագ առչորմամբ եւս դժադրել հեղահոգի և քարեփառ ք^ննյալեան տէր Պետրոս վարդապետն որդի գոյով ազատաց յազդէն մեծի իշխանացն Գրիգորի և Հասանայ Դօքեանց կոչեցելոց: Յազագս յիշատակի հոգւոյ իւրոյ և եղբօրն հարադատի տեառն Գրիգորի եպիսկոպոսի, ի հայրապետութեան Հայոց Եղիազարու դիտապետի լուսակառոյց գահոյն սուրբ հիշմարտնի և ի կողմանս Ազուանից Տեառն Արեւմիայի և Սիմէօնի կաթողիկոսացն: Եւ ի յառաջնորդութեան գերահոշակ Աթոռոյն Թադէի վանից Տեառն Պետրոսի արիւնջան և քաջ հովուապետի, և ի մեկեքութեանս սոյն նահանգի պարոն Միլլաքախան քէկին, և ի Թազաւորութեան Պարսից Շահ Սուլէյմանին, ի Թուին Հայոց ՌՃԼԳ...»։ Այս յիշատակարանն իրօք տրամադրում է կարծել, որ Դօքեան Պետրոս վարդապետը և Դադի վանքի համանուն առաջնորդը տարբեր անձնաւորութիւններ չեն: Նման մի յիշատակարան, գրած հայոց ՌՃԽԳ Թուին գտնում ենք ի դէպ նաեւ Ե. Կալայեանի «Յուդակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի» ի № 449-ի ներքոյ:

Էջ 173—4, հեղինակը հաւանական է համարում, որ 18-րդ դարի սկզբում Սիւնեաց մելիքների քաղաքական շարժումների մէջ Մելիք Շահնազարեան մելիքներն ու իւզբաշիններն ևս իրանց մասնակցութիւնն ունենային: Կարող ենք պնդել, որ հեղինակի այս ենթադրութիւնն արդարացի է: Մոսկուայի արտաքին գործոց նախարարութեան պիսաւոր դիւանի գործերից երևում է, որ 1724 և 1726 թուերին Գեղարքունեաց երկրի Մելիք Շահնազարի որդի մելիք Սարգիսջանը՝ իր և իր երկրի իւզբաշինների և 30 գիւղի գլուխ կանգնած տանուտէրների ու քանդխուղաների անունից հպատակութեան թուղթ է յղել ռուս արքունիքին և պատրաստակամութիւն յայտնել՝ ենթարկուելու Սիւնեաց երկրում գանդուղ ուսաց քաղաքական գործակալին: Այդ մասին Թաւրած գործին ըստ էութեան կը գառնանք այլ առթիւ: Այստեղ կը կամենայինք միայն ենթադրել, որ մոսկովեան դիւանի գործերում յիշուող մելիք Սարգիսջանը մելիք Շահնազար Գ-ի յաջորդն է: Դաւիթ իսանի թղթերում, ուր ներկայ դէպքում ըստ երևոյթին անուններից մէկն է միայն շփոթուած, մելիք Շահնազար Գ-ի յաջորդը կոչւում է մելիք Ազաջան, իսկ վերջինիս որդին՝ մելիք Միանսար: Մեր ձեռքի տակ եղած փաստաթղթերից մէկի մէջ մելիք Սարգիսջանի անունը կից յիշւում է «Միխ(ն)սար» ա-

նունը, որից յետոյ գալիս են Գեղարքունեաց տանուտէրների տնունները. ըստ երևոյթին վերջիններիս հանդէպ «Միիա(ն)սարն» արտօնեալ վիճակ ունէր. ուստի և կարելի է ընդունել, որ նա հէնց մելիք Սարգիսջանի որդին է:

Էջ 179 և հետ. հեղինակը փորձում է սերնդարանական կապեր գտնել Գեղարքունեաց և Ղարաղաղի մելիքների միջև. այդտեղ յարուցած խնդրի մօտաւոր լուսարանութիւնը թողնելով ուրիշներին, կը կամենայինք մատնանշել էջմիածնի մատենագրաւորների № 1720/1488-ի 1781 թուին դրած յիշատակարանի մէջ բերուած Ղարաղաղի ժամանակակից մելիքներից մէկի անուն վրայ ևս. գրչագրի թերթ 218 բ յիշատակուած ենք գտնում. «Մէլիք Փարսաղանն, որ ի Ղարաղաղ, այր հանճարեղ»:

Անյայտ և անյիշատակ շատ այդպիսի «հանճարներ» է տեսել հայոց աշխարհը. յուսանք, որ Ազգագրական Ընկերութեան ազագայ հրատարակութիւնները կը գան դեռ ցրելու, գէթ մասամբ, մոռացութեան այն մշուշը, որ սփռում է դրանց անուն և գործերի վրայ:

Ա. Յովհաննիսեան:

